Բ. ՏԱՐԻ ՆԻՒ ԵՈՐՔ ՅՈՒԼԻՍ 1 1892 ԹԻՒ 13

ՀԱՅԿ

ՀԱՆԴԷՍ ԱԶԳԱՅԻՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԱՄՍՈՑ 1ԻՆ ԵՒ 15ԻՆ

Տէր և Խմբագիր — Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ Editor — M. S. GABRIEL M. D.

202 W. 23d St., New York.

Տարեկան բաժնեգինն է ամեն երկրաց համար 2 թալէր կամ 10 ֆրանք։

Բաժանորդագրութիւնք կը հաշուին Յունվար 1 էն։

Entered as second-class mail matter. at P.O.NewYork. NY

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայ Իմացական կեանք։—Աղէտք Զէյթունի.— Նամակ Էջմիածնէն — Նամակ Կ. Պոլսէն — Անգլիոյ քաղաքականութիւնն յԱրևելս.— Հիւպատոսական տեղեկագիր Հարստահարութեան. — Մեր Ռուսահայ եղբարց Հայրենասիրական Եռանդն.— Նամակ Կ. Պոլսէն.— Նշոյշ ի գրուածոց Խրիմեան Հայրիկի. Աւետարան.— Քաղաքական, Ազգային և զանազան լուրեր։

ՀԱՅ ԻՄԱՑԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Ա.

Դիտելով փոքր տղու մի կազմութիւնն կրնամք առանց դժուարութեան գուշակել թէ նա որքան յաղթանդամ մարդ պիտի լինի երբ մեծնայ։

Մեր ազգին ալ Ե. դարու մանուկ գրականութիւնն քննելով կրնամք գուշակել թէ ինչ մեծութեան չափեր պիտի առնոյր նա եթէ չարունակէր անխափան։

Չկրցաւ սակայն չարունակել այդ մանուկ իւր աճում, ոչ իւր բնական շրջափոխութեան վերջին աստիճանին հասած լինելով այլ արտաքին արգելքներու հանդիպելով։

Սահակ և Մեսրոպ, աջակցութեամբ Վռամշապուհ թագաւորին, երկնեցին և ծնան հայ գրականութիւնն, յառաջ բերին հայ խորհողներ և գրողներ որք իրենց իմացական բեղմնաւորութեան սերմերն ընդունած էին արտառահմանի մեծ դպրոցներէն — Աթէնքէն, Աղէքսանդրիայէն, Հռովմէն, Եդեսիայէն և Կեսարիայէն —։ Խորենացի, Ղազար, Եղիշէ, Դաւիթ և այլն ամենայն կը ներկայացունէին հայ իմացական կեանքի առաջին, սկզբնական այն վիճակն յորում միտքն օտարին յարած կը մնանի և դեռ հազիւ երբէք իւրածին խորհուրդներ դուրս կուտայ. ինչպէս որ պատանւոյ մի դպրոցական ճառերուն մէջ անձնական խորհուրդ դրեթէ չգտնուիր որքան ալ լաւ շարադրուած լինի քերականօրէն։ Հայ ազգն չէր կրնար իւր ուրոյն հանճարի արդիւնքն տալ երբ տակաւին հետևող և աշակերտ էր օտարի, երբ դեռ կաթնկեր էր դայեկի ստեանց փակած։ Պէտք է ժամանակ անցնէր, մտաւորական գործունէութեան բուն ազգային կեդրոն կազմակերպուէր, օտարաց բոլոր գլուխ գործոցներն թարգմանուած և մարսուած լինէին հայ մտաց մէջ, և արտաքուստ ընդունուած խորհրդոյ սերմերն հայկական հողոյ վերայ հայ համով ու հոտով պըտուղ լինէին որպէս զի տեսնէինք թէ ինչպէս կը լինի բուն հայ իմացականութեան արդիւնքն։ Որքան ալ իմաստասիրական զգօնութիւն ունենային Եզնիկ, Յովսէփ, Խորենացի, Դաւիթ և այլք, տակաւին անհնար էր որ հայ հանճարոյ բոլոր զօրութիւնն անդէն զարթնոյր ի նոսա։ Երբ Յունաստան բուսոյց զԱրիստոտէլ, զիշխանն իմաստասիրաց, քան զնա յառաջ բուսուցած էր զՊըղատոն, և յառաջ քան զՊղատոն՝ զՍոկրատ, և յառաջ քան զՍոկրատ ուրիշներ։ Իմացականօրէն Արիստոտէլ ուղիղ գծով թոռն էր Սոկրատայ Հայ ազգն չկարաց իւր Խորենացիներու թոռունքն ողջունել։

Բ

Հայոց պատմութեան քան զամենայն տխուր և հոգեխռով ժամանակամիջոցն է այն յորում ազգային արշակունի իշխանութիւնն կը վերնայ և ազգային գրականութիւնն կը դադարի յառաջանալէ։ Առ կենդանութեամբ Սահակայ և Մեսրոպայ առաջին աշակերտք վերադարձած էին օտար վարժարաններէ, բայց Խորենացին և իւր ընկերք, աւելի բազմաթիւ, երբ վերադարձան, սոսկալի պատրանք կրեցին գտնելով որ ոչ ևս են Սահակ, Մեսրոպ, Վռամշապուհ, ազգային իշխանութիւն, կարգ կանոն, խաղաղութիւն և միութիւն։ Հայաստան թատր մ'էր դարձած քաղաքական և առտնին խառնաշփոթութեանց։ Ատելութեան ցրաշունչ սառմանեաց ազդեցութեան տակ հայ իմացական կեանքի սերմերն թմրեցան և նորատունկ հաստատութիւնք անպայման ժամանակաւ դադարեցան զարգանալէ։

Խորին ցաւով և ամօթով միայն կրնայ հայրենասէր Հայն կարդալ այն չարաղէտ բաղդն որ վիճակեցաւ մեր ազգային մշակաց եռանդուն կարգին։ Խորենացին և այլքն գիտութեան ճոխ պաշարներով ծանրաբեռնեալ կը սլանան կուգան իրենց սիրեցեալ հայրենիքն օժտել իմացական հարստութեամբ, մշակել հայ միտքն և սերմանել անդ ազնուագոյն գաղափարաց ներածեալ սերմունքն, և ահա սոսկալի արգելքներու կը բաղխին և կը լինին յուսախաբ չարաչար։ Հայ եկեղեցականներ և աբեղաներ եղան դաժան հակառակորդքն յօտարութենէ նորեկ իմաստասիրաց։ Զուզելով նոցա քով երկրորդական դիրք բռնել կամ նոցա առաջնորդութեան յանձնել ազգային հաստատութիւններն և ժողովուրդն, դժոխաշունչ և փոքրոգի չարակնութեամբ բամբասեցին զնոսա, զրպարտեցին, հերետիկոսական և մոլար գաղափարներ ընծայեցին նոցա, հալածեցին, վռնտեցին, այն-

պէս որ Խորենացիներն ու Ղազար Փարպեցիներն ստիպուեցան ասպարէզէ քաշուիլ, վանքերէն ալ հեռանալ, գիւղէ գիւղ թափառիլ, մուրալ, ծակամուտ լինիլ, յանապատս առանձնանալ և ողբալ ազգին առաջնորդաց յիմարութիւնն ու անզգամութիւն։

«Ողբա՜մ զքեզ, Հայոց աշխարհ, ողբա՜մ զքեզ, հանուրց հիւսիսականաց վեհագոյն· զի բարձաւ թագաւոր և քահանայ, խորհրդական և ուսուցող· վրդովեցաւ խաղաղութիւն, արմատացաւ անկարգութիւն···։ Զարթի՛ր, Երեմիա, զարթի՛ր, և ողբա հանդերձ մարգարէութեամբ՝ որ ինչ թշուառացաքս և որ ինչ թշուառանալոցս եմք· գուշակեա զյառնել հովուաց տգիտաց··· վարդապետաք տխմարք և ընդինքնահաճք, անձամբ առեալ պատիւ և ոչ յԱստուծոյ կոչեցեալ· արծաթով ընտրեալք և ոչ Հոգւով· ոսկեսէրք, նախանձոտք, թողեալ զհեզութիւն·· և գայլք եղեալ՝ գիւրեանց հօտս գիշատելով։··· Աչակերտաք հեղգ առ ուսումն և փոյթ առ ի վարդապետել···»

Խորենացւոյն վշտահար հոգւոյն խորերէն բխած այդ ողբն ամեն ընթերցողի վերայ խորին տպաւորութիւն կը գործէ։ Մովսիսի գրչին հղօրագոյն արտադրութիւնն է այն։ Ամեն անգամ որ կարդացած եմք զայն՝ խորապէս յուզուած և մեք խառնած եմք մեր արտասուք այն հայրենասէր գիտնականին արտասուաց որ խոցող շեշտերով կ'ողբայ հայ իմացական նորածին կեանքի տրուած մահացու հարուածներն։

Ցիրաւի այդ յաւէրժ ողբալի դէպքերէն յետոյ, յաջորդ դարուց մէջ այլ ևս չկրցաւ ազգն իմացական վերածնութեան ոևէ լուրջ փորձ ընել։

Գ

Արդի ժամանակաց շարժումն սկսաւ Մխիթար Աբբահօր նախաձեռնութեամբ, որոյ գործն շարունակեց Մխիթարեան Միաբանութիւնն։

Մխիթարեանց գործն եղաւ մեր նախնեաց մտային գանձերն փնտրոյ տակէն հանել և ընձեռել ազգին։ Մխիթարեանք գրական նախաճաշակն տալով ազգին, հաղորդեցին նմա իմացական շարժման առաջին ցունցն։ Այդ եղաւ նոցա փառքն, և ազգն երախտապարտ է նոցա։ Բայց հնար չէր Հայաստանի իմացական վերածնութեան գործն կատարել ի հեռուստ, Վենետիկէն կամ Վիէննայէն։ Պարտէր բուն Հայաստանի ծոցէն ելնել հոգւոյ անսովոր մեծութեամբ ոմն որ բուն Հայաստանի մէջ լուսոյ վառարան ստեղծելու և ողջոյն Հայաստանն լուսաւորելու խորհուրդն յղանայր և զայն ի գործ դնել սկսէր։— այն եղաւ ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ։

Խրիմեան Հայրիկով Հայոց Պատմութեան մէջ նոր շրջան մի սկսած է որպէս Մխիթար Աբբայով։

Խրիմեան Հայրիկ է որ Վարագայ վանքին մէջ 1857 ին հաստատեց դպրոց՝ վարդապետներ և ուսուցիչներ հասցուներելու, տպարան, թանգարան և սկսաւ հրատարակել ազգային հանդէս մի՝ «Արծուի Վասպուրական։»

Թէ Մխիթարայ և թէ Խրիմեանի ձեռնարկութիւնքն նախապատրաստական էին· բուն հայ գրականութիւնն վանքերու խորշերէն հանել, և նախնեաց սերմերը սերմանել հայ անդաստանին մէջ։

Դ

Ցաջորդ և մեծ քայլն պիտի լինէր արտասահմանէն ներածել նոր մտային գանձ։

Սահակ և Մեսրոպ իրենց ժամանակին կրթական մեծ կեդրոններն յղեցին հայ երիտասարդներ· ճիշդ այդ նոյն բանն կը մնայր ընել նաև զարդիս։

Ցիրաւի երիտասարդք սմանք անհատական նախաձեռնութեան շնորհիւ ուսան Եւրոպայի մէջ բարձրագոյն դասեր· յիրաւի Սանասարեան ևս հասոյց մի քանի ուսուցիչներ· բայց մեր դարու մէջ ազգա յպաշտօնական ձեռնարկ չեղաւ նման Ե· դարու Սահակ-Մեսրոպեան ձեռնարկին։

Այն կաթողիկոսն որ 100 կամ 200 երիտասարդներ՝ հայկական նախակրթութեամբ պատրաստուած՝ պիտի յղէ եւրոպեան այլ և այլ համալսարաններ, որք գիտութեամբ և խորին մշակութեամբ եւրոպականացեալ՝ դառնան և մշակեն հայ միտքն եւրոպեան եղանակօք, նա Սահակայ և Մեսրոպայ համահաւասար ՄԵԾ ՀԱՅՐԱՊԵՏ պիտի հանդիսանայ։ Եթէ Խրիմեան Հայրիկ լինի զայդ ընող կաթողիկոսն, նա Ս· Գրիգոր Լուսաւորչէն յետոյ մեծագոյն հայրապետն կը լինի Հայոց Պատմութեան մէջ։

Երբ Հայ ազգին մէջ Գրիգոր Արծրունիի նման բարձր զարգացման հասած մարդիկն 10 կամ 20 լինելու փոխանակ լինին 200 կամ 300, յայնժամ դժոխք ինքնին իւր բոլոր հնարիւք չկարէ մեռցունել այդ ազգն· և երբ 75 տարի զարգանայ նորա մէջ իմացական նոր կեանքն, յայնժամ Վանի կամ Կարնոյ մէջ առ ոտս հայ ուսուցիչներու կուգան աշակերտիլ դրացի ազգաց զաւակ՝ եւ եւրոպեան լեզուաց կը թարգմանուին հայկական կասիրութիւններ իբրև հայածին խորհրդոց և դրութեանց գլուխ գործոցներ։—Յայնժամ հայ ազգն կը լինի մեծ։

ԱՂԻՏՔ ԶԷՅԹՈՒՆԻ

(Շար· և վերջ Տես թիւ 11 և 12)

Ժողովուրդն խումբ խումբ կուգան յոգնած հիւպատոսին ի տես, և գիշերուան մեծ մասն այնպէս կանց նի տեսակցութեամբ։ Հիւպատոսն Զէյթունցւոց քով կը մնայ շաբաթ մի, և նոցա մեծերուն հետ կը խօսի։ Լեռն ելած ապստամբաց խմբին հետ ևս խօսելու և նոցա ալ ցաւերն իմանալու բաղձալով՝ գիշեր մ'ալ նոքա կուգան տեսութեան։ Այս բոլոր տեսակցութիւններէն և հարցաքննութիւններէն կը հասկնայ հիւպատոսն թէ Զէյթունցւոց դիրքն և ընթացքն պաշտպանողական եղած է և ոչ յարձակողական, և թէ, հետևապէս, շատ դիւրին է կառավարել զնոսա եթէ արդարութեամբ վարուի նոցա հետ կառավարութիւնն։ Նաև կը տեսնէ թէ Զէյթունցւոց խիզճն և բարոյական զգացումն եղծեալ չէ ինչպէս կրնար կարծուիլ նոցա ընթացքէն, և թէ նոցա գլխաւորներն ողջամիտ և խոհուն մարդիկ են։

Ապստամբապետն ինքնին քաղաք գալով իւրայնոց հետ՝ մեծ ճաշկերոյթ մի կուտայ ամերիկեան հիւպատոսին ի նշան երախտագիտութեան։

Հինգ հարիւր բառերէ բաղկացեալ տեղեկագիր մի կը պատրաստէ հիւպատոսն, յորում համառօտիւք կը ցուցուի թէ Զէյթուն ապստամբ չէ, այլ տրոց ծանրութեան և այլ հարստահարութեանց պատճառաւ նեղեալ և տառապեալ լինելով՝ կարօտ կը գտնուի ոչ թնդանօթի և բանակաց արհաւրացն այլ արդարութեան և իրաւանց։

Իբրև ապացոյց հպատակութեան՝ Զէյթունցիք հիւպատոսին կը յանձնեն բոլոր զէնքերն և ռազմամթերքն հազարապետին ձին և ժամացուցի ոսկի շղթայն զորս առած էին կռուոյն մէջ։ Այսպէս կը պատրաստուին չորս բեռինք, և հիւպատոսն հեծնելով հազարապետի ձին, մնաք բարով կ'ըսէ ամենուն և կ'ուղեւորի դէպ ի Մարաշ։ Ուղղակի կառավարութեան ապարանքն կերթայ, բեռներն կը յանձնէ, և անտի դիմելով հազարապետին բնակարանն, ձին ու ժամացուցի շղթայն նմա կը վերադարձունէ։

Հիւպատոսն կը տեղեկանայ թէ այն միջոցին երբ ինքն ի Զէյթուն կը գտնուէր, կառավարութիւնն քաջաց քաղաքն ջախջախելու եռանդուն յուսով վաշտ մի զօրք Ուրֆայեն բերել տուած է, և վաշտ մ'ալ Մարաշի մէջ պատրաստած լինելով, չուելու հրամանին կ'ըսպասէ կազմ և պատրաստ։

Իւր տեղեկագիրն կուսակալութեան և անգղիական հիւպատոսին հայորդելու համար՝ հիւպատոսն կիրակի առաւօտ կը փութայ ի հեռագրատուն։ Հոն տարօրինակ դժուարութեանց առջեւ կը գտնէ ինքզինք։ Նախ կ'ըսեն թէ միւտիրն ներկայ չէ, չեն կարող հեռագիր ընդունիլ։ Ապա կը սկսին տեղեկագրին բառերն քննադատել, սրբագրել, և վերջապէս նորէն ամբողջն գրել կ'ուզեն։ Միւս կողմէն Հալէպի հեռագրատան միւտիրին ևս բացակայութիւնն պատճառ կը ցուցուի յապաղմանց։ Եւ այս ամեն դժբաղդ պատահարաց վերայ հուսկ ուրեմն կ'աւելնայ նաև ուրիշ մ'ալ — հեռագրի թելն կտրած կը լինի։ Հիւպատոսն ամբողջ օրն անուսաղ ի հեռագրատան անցունելէ յետոյ չկարենալով հեռագիրն հաղորդելու յաջողիլ կը վերադառնայ ի տուն, և եթէ հեռագրի թելն կտրած է, ձիերու ոտքն կոտրած չէ, փառք Աստուծոյ, կ'ըսէ, և ինքն յոգնած լինելով իւր ընկերաց երկուքն ճամբայ կը հանէ երթալու հապճեպով ի Հալէպ և ամեն ինչ բանիւ բերանոյ պատմելու։

Գիշերային այդ ճամբորդութիւնն ալուն իւր արկածներու և նեղութեանց պատմութիւնն, զոր զանց կ'ընեմ չերկարելու համար։ Չորեքշաբթի առաւօտ կը հասնին ի Հալէպ, կ'երթան առ անգղիական հիւպատոսն և անոր ընկերակցութեամբ՝ կուսակալին կը ներկայանան։ Թուղթերն և բոլոր անցից պատմութիւնն կը դընեն կուսակալին առջև։ Փաշան կը զայրանայ այն յոռի ընթացքին համար որով Մարաշի կառավարութիւնն արգիլած էր հեռագրին հաղորդուիլն, և իսկոյն հեռագրական հրամանաւ հեռագրական տնօրէնն պաշտօնանկ կ'ը նէ և մութասարրըֆին ալ ի Հալէպ կը կոչէ։ Յետոյ հասկցուածին համեմատ՝ Մարաշի կառավարութիւնն այն նպատակաւ և յուսով ուղած էր հեռագիրն խափանել որպէս զի տեղեկագրին այլապէս ի Բերիա հասնելէն առաջ՝ Մարաշի մէջ սպասող բանակին հրաման տրուի Զէյթունն գարնելու։

Բանակն ետ կանչուի· բայց այս մեծ խնդիրն կը մնայ կարգադրել։ Սաչափն լաւ կը տեսնուի թէ այլ ևս կարելի չէ այն խեղճ ժողովուրդն զարնել ջնջել իբրեւ ապստամբ։ Պէտք է ուրիշ հնար գտնել։

Հնարն գտնելու համար յատուկ պատուիրակութիւն մի յղուեցաւ Կ. Պոլսէն· եկին Մազհար փաշա և Նուրեան էֆէնտի։ Այդ պատուիրակութեամբ ժողովրդեան ուշադրութիւնն զբաղեցնելու պահուն՝ կառավարութիւնն մեծ գործ մի կատարեց· ո՛չ զԶէյթունն գոհ և խաղաղ ընելու միջոցներ կարգադրելու գործն, այլ ամենայն ապագայ դժգոհութեան, բողոքոյ և խլրտման առջեւն առնլու գործն· Պատուիրակաց հետ գօրք յղուեցան ի Զէյթուն, և քաղաքին հանդէպ բլրոյն վերայ, յոյժ հաստատուն զօրանոց կառուցուեցաւ իբր կառավարութեան ապարա՛նք։

Տաճկական առակն կ'ըսէ «կէճ օլսուն կիւճ օլմասուն·» ըստ այնմ կառավարութիւնն ըսաց· այս անգամ չկարացինք ջնջել քաջերու բոյնն, բայց կարացինք այնպիսի պատրաստութիւն մի ի գլուխ հանել որոյ շնորհիւ դիւրին պիտի լինի այդ բոյն քայքայել և ի չիք դարձուցանել ապագայ պատեհ առթիւ։

Գալով պատուիրակաց, նոցա գործն եղաւ որոշել թէ Զէյթունի տուրքն պէտք է թեթևնայ, և թէ Զէյթունի հնազանդ ժողովուրդն պարտի օգնել կառավարութեան ձերբակալել ապստամբներն։ Եւ վերջապէս յոյս յայտնելով թէ շնորհիւ Սուլթանին հոգածութեան և հայրական խնամոց այնուհետև հանգիստ և երջանիկ կ'ապրին Զէյթունցիք՝ հեռացան գնացին։

Նոքա հեռացան գնացին, նոցա խոստմունք և մաղթանք ալ իրենց հետ։ Զէյթուն առաւել քան երբէք նեղեալ, թշուառ և հարստահարեալ է յայնմ հետէ, միակ յիշատակն այդ պատուիրակաց այցելութենէն որ մընացած է ու պիտի մնայ՝ է Զէյթունի վերայ սպառնալից և հրալից նայող ամուր զօրանոցն։

ՆԱՄԱԿ ԷՋՄԻԱԾՆԷՆ

Էջմիածին 18 Մայիս 1892

Սիրելի Տէր և բարեկամ,

Եթէ երբէք գրելու արժանի բան մը տեսած եմ յորմէ հետէ գրել սովրած եմ, այն ալ կաթողիկոսական ընտրութեան անցեալ երեք օրերու պատմութիւնն է։ Այդ երեք օրերու մէջ զգացի ինչ որ բոլոր կենացս մէջ ըզգացած չէի։ Տխրեցայ և խնդացի, յուսահատեցայ և յուսացի, արտրեցի և մարեցայ, զմայլեցայ և կայտառեցի որպէս ոչ երբէք կրցած էի։ Կարծես թէ հայութիւնս և քրիստոնէութիւնս նոր իրողութիւններ դարձան ինձ։ որպէս թէ երկրորդ անգամ ծնայ և մկրտուեցայ։ Վեհարանէն ի տաճար թափորական գնացքն, հանդիսաւոր երդումն ի տաճարին, եկեղեցական և աշխարհական պատուիրակաց ի չորից ծագաց աշխարհի եկելոց միահամուռ ներկայութիւնն և միաձայն երգելն «Էջմիածինն ի Հօրէ,» վերջնական քուէարկութիւնն, ի լուր Խրիմեան Հայրիկի միաձայն ընտրութեան աւետեացն հազարաւոր բազմութեան անօրինակ խանդավառումն և որոտաձայն կեցցէներն, նոյն աւուր պաշտօնական խրախճանիր ճաշկերոյթն— այդ ամենն նկարագրելու համար պէտք է որ լինէի ինչպէս բանաստեղծ որպէս հայ եմ։

Հայ եմ, այո՛։ Խօսեցան ինձ Էջմիածնի քարերն ու կամարքն իբրև երկնահունչ քնարներ· Ներսէսներու և Սահակներու հովանին ծածկեց գիս, հայրապետաց բարբառն հնչեց հոգւոյս ականջներուն· «բարեաւ եկեր դու, ո՛րդեակ, դու բարեաւ եկեր ի հեռուստ· ողջոյն և խաղաղութիւն ընդ քեզ· օրհնեա՛ զՏէր Աստուած Հարց քոց, և տար ընդ քեզ զօրհնութիւն երկնաւորին և զմեր առ եղբարս քո խոփիւռս աշխարհի։»

Սուրբ Հայրապետաց հոգեւոր ներկայութիւնն թանձրացեալ և չօշափելի դարձաւ ինձ համար Մայիս 17ի այն վսեմ և ահաւոր ժամուն երբ եպիսկոպոսաց պատկառելի բազմութիւնն տեսայ, որոց ամենք յիրաւի հայրապետական ալիք և հայրապետական ոգի կը կրէին, փառաւոր ճակատներ, տաղանդափայլ աչքեր, բարեխօս շրթունք· և երբ այդ ամենուն ի գլուխ տեսայ խանդավառեալ երեւակայութեամբս զվեհ երեւոյթ պաշտեցեալ Հայրիկի—ա՛հ, յայնժամ հինն ու նորն, անցեալն և ներկայն իրարու խառնուած, յիշատակաց և իրողութեանց ահագին հոսանք մի ողողեց հոգիս, թացաւ աչքըս, ուռոյց կուրծս, և սրտիս խորագոյն խորէն յերկինս սաւառնեցան առ գահն Ամենակալին հառաջք փառաբանութեան...։

Մեր եկեղեցւոյ և ազգութեան համար արդար հը պարտութիւնն զոր զգացի այն օր —զոր զգացին այլքն ամենայն— արդիւնք է ընտրութեան վերջնական փառաւոր յաջողութեան։ Եթէ որ· Աշըգեանի ի նպաստ և Խրիմեանի դէմ յայտնապէս կամ գաղտնապէս մաքառողներն անձնատուր եղած չլինէին, եթէ ազգին ընտրեալն չհանդիսանայր նաև նորա պատուիրակաց միաձայն ընտրեալն, մեր ամենուն աւիւնն պիտի փոխուէր ի տխրութիւն անպատում, գուցէ նաև ի կատաղութիւն և ողբալի խառնաշփոթութեան մէջ եկեղեցականաց ոմանց մօրուքն փետտուէին ի ձեռն զայրացեալ ամբոխին, և գուցէ արեամբ արձանագրուէր ընտրութեան յիշատակն տաճարի բակին քարերուն վրայ ի յաւիտենական ամօթ քար սրտերու։

Փա՛ռք Աստուծոյ, հազար անգամ փառք որ 72 անգամ «ընտրեմ» բարբառն հնչեց տաճարին մէջ ինքպաստ Հայրիկի, և ոչ մի ձայն կրցաւ «ոչ» բառն արտասանել։

Կեցցէ՛ Հայրիկ, կեցցեն ողջամիտ և ազնուասիրտ Հայեր, կեցցէ՛ Հայ ազգն։ Ցաւէ՛րժ կեցցէ Հայրիկն Հայրենեաց։ Ամէն։

ՊԱՏԳԱՄԱՒՈՐՆ

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԷՆ

Ազնիւ խմբագիր,

Ձեր խորհրդալիր թերթի համար երկրորդ նամակ մը գրելու փորձութեան մէջ եմ։ Ազգային նշանաւոր երևոյթ մի տեղի ունեցաւ որուն վրայ խօսիլ կ'արժէ։ Տիւր դէպքերու անվերջանալի շարքն ընդհատեցաւ մխիթարական նշանով մը։ Խրիմեան Հայրիկի միաձայն ընտրութիւնն ի կաթողիկոսութիւն շատ նշանակիչ բան մ'է։ Երուսաղէմի մէջ նետուած այդ մեծ անձնաւորութիւն առանց ամենափոքր ջանք մ'ընելու իր ընտրութեան համար, բովանդակ Հայութեան ներկայացուցիչներուն քուէն շահեցաւ, մինչդեռ Աչըգեան Պատրիարքին՝ որ կ'եռայր ընտրուելու բաղձանօք՝ քառանուն ընտրելեաց ցանկին մէջ անգամ տեղ չտուին։

Ուրեմն արժանիքն հռչակեցաւ և ողջմտութիւնն յաղթանակեց։ Սկզբունքի ծառայողներն թուով և ուժով գեր ի վեր գանուեցան սուտ քաղաքականութեան հետևողներուն։ Ուրախանանք գԽրիմեան Հայրիկ հայրապետ տեսնելու յուսով, և մխիթարուինք նաև որ ազգին մէջ շատցած են վեհն ու ազնիւն սիրող մարդիկ և յանուն ազգին ճշմարիտ շահուց մաքառող ախոյեանները։

Ընտրութեան արդիւնքն սոսկալի կերպով յուսախաբ ըրաւ զՍր. Աչըգեան։ Սա շատ նկուն և շատ տրտում կը զգայ այժմ։ Իբր թէ ազգին բարկացած լինելով կը հրաժարիմ կ'ըսէ։ Ինչո՞ւ այլ ևս չարունակէ պատրիարքական փչոտ գահուն վրայ չարչարանք կրել քանի որ ազգն իւր արժանիքն չճանաչեր...։

Սահմանադրութեան տարեդարձն տօնել չկրցանք այս տարի։ Տօնն արգիլուած չըլլալով հանդերձ արգիլուած էր։ Սահմանադրութեան եւը չկար, ձեւն ալ գըրեթէ չմնաց։ Հոգին թռած էր, տառն ալ թաղուելու մօտ է շնորհիւ սր. Աչըգեանին և զինքն պաշտպանող մի քանի դրանիկ էֆէնտիներու։ Գիտէք թէ այս էֆէնտիներ Աչըգեանի թեր կ'ելնեն ոչ թէ զնա սիրելով այլ Դրան ծառայելու հարկէն ստիպուած։ Գալով սր. Աչըգեանի անձնաւորութեան, չեմ կրնար ըսել թէ նա շատ գէշ մարդ մ'է, կամ վատ փառամոլ մը. բայց կրնամ ըսել թէ պատրիարք լինելու մարդ չէ, մանաւանդ Սուլթան Համիտի պէս կայսեր օրով։ Այդպիսի փատիշահի առջև կեցունելու համար պէտք է ընտրել եպիսկոպոսաց քան զամենայն արին և իմաստունն. այնպիսի մէկը որ Խալիֆին խօսի իբրև սուրբ Հայրապետ, վեհապետին խօսի վեհօրէն և արքային առջև կտնգնի արքայի պէս։

Այդպիսի եպիսկոպոս կա՞յ թէ չկայ այժմ. ահա այդ է խնդիրն. պէտք է այնպիսին գտնել և դնել փութով պատրիարքական գահուն վրայ այն եռանդեամբ և կորովով որով կրցանք Խրիմեանի ընծայել հովսեպապետական գաւազանն։

Կ. Պոլիս, 9 Յունիս 1892 ԽԻԿԱՐ

ԱՆԳԼԻՈՑ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆՆ ՅԱՐԵՒԵԼՍ

Կ. Պոլսէն Անգլիացի մի կարեւոր յօդուած մի հրատարակած է Քոնթէմփորէրի Թիվիսու կոչուած անգլիական հանդիսին Յունիս թուոյն մէջ, որոյ մի քանի կարեւոր կետերն կը բովանդակենք հետևեալ եղանակաւ։

Արեւելեան խնդիրն երկու տարբեր լուծումներ կրնայ ընդունիլ, մին է ռուսական լուծումն, որով Կ. Պոլիսն և հարաւային արեւելեան Եւրոպան (Պալքանեան փոքր պետութիւնք և Ռումանիա) կցուին Ռուսիոյ, և միւսն է բնական լուծումն, որով ուրիշ փոքր պետութիւններ կազմուին օսմանեան կայսրութենէն։ Թղթակիցն կը ցուցնէ թէ բնական լուծումն է միակ արդար և ողջիղ լուծումն խնդրոյն, հետևապէս այն միայն կրնայ տեւական լինիլ։ Անգլիոյ քաղաքականութիւնն եղած է բաղում տարիներէ հետէ, և պիտի չարունակէ լինիլ, հայթայթել խնդրոյն բնական լուծումն և դէմ դնել ռուսական լուծման։ Անգլիական կառավարութիւնն այժմ ակնկալու քաղաքականութեան մի պիտի հեւևի բաղձացեալ լուծումն իրացնելու նպատակաւ։ Հաւանական չէ որ բռնի զՍուլթանն դուրս հանէ Կ. Պոլսէն։ Սոյգ է նաև թէ չպիտի նեցուկ ընծայէ օսմանեան զեղծ կառավարութեան։ Շատ տարիներէ ի վեր յոյս չէ մնացած բարեկարգեալ և լուսամիտ թրքական կառավարութիւն մի ստեղծելու զոր կարելի լինէր պաշտպանել։ Ամ քան զամ այս կառավարութիւնն աւելի բռնապետական, աւելի հակաքրիստոնէական և աւելի անբանաւոր կը լինի, հետևապէս աւելի անթոյլատրելի։

Ներկայ սուլթանը ունի շատ լաւ յատկութիւններ, և կը վաստկի իրեն մերձեցողաց ամենուն ալ համակրութիւնն. սակայն դժբաղդաբար խալիֆա մանաւանդ է քան թագաւոր։ Իւր արքունեաց մէջ բանտարկեալ մ'է նա, անձնասէր խաբեբայներէ շրջապատեալ, և ի հարկէ տգէտ կը մնայ կայսրութեան իրական պիտոյից։ Հանապազ կը վախնայ յեղափոխութենէ, և կը լնու զքաղաքն իւր գաղտնի ոստիկանութեամբ, որոյ անդուլ լրտեսութիւնն ի յուսահատութիւն կը մղէ լուսաւորեալ թուրքերն։ Մահմետական տարրն զօրացնելու և քրիստոնեայ հպատակաց յառաջդիմութիւնն արգիլելու ամեն միջոց կը գործածէ։ Նոյնպէս դաշնագիրներ եղծելու և օտարականաց արտօնութիւններն սեղմելու համար կ'ընէ ամեն ինչ որ կարէ։ Կայսրութեան սովորական օրէնքներն կը թուին հնարուած լինիլ գործոց արգելք լինելու համար մանաւանդ քան թէ դիւրութիւն տալու։

Անգլիա չկրնար անտարբեր մնալ։ Նա պարտի արգելուլ զՍուլթանն այնպիսի ընթացքէ որ անվրէպ կործանման կ'առաջնորդէ զնա։ Անգլիա չկրնար հաւնիլ նորա բռնապետական և հակաքրիստոնէական քաղաքականութեան։ Եթէ մինչև իսկ բռնութիւն գործածել պէտք լինի Ռուսիոյ գօրութեան յանձնուելէ արգիլելու համար զՍուլթանն, անբարեկամական գործ մի չպիտի լինի այդ։ Մեզ հնար է բարեկամ լինիլ հիւանդ մարդու մի մինչդեռ կապրի նա, թէև տարակոյս չունիմք թէ պիտի մեռնի, մեր մտադրութիւնն լինելով հսկել որ նորա ստացուածքն ըստ արժանւոյ բաշխուին յետ մահուանն։

ՎԵՐՋԻՆ ՊԼԻՈՒ ՊՈՒՐՔԷՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ԱՆԳԼԻԱԿԱՆ ՆԵՐԿԱՅՑԱՑՈՒՑԱՑ Ի ԹՈՒՐՔԻԱ

Անգլիական փոխ-հիւպատոս Տ. Թ. Պոյաճեան առ հիւպատոս Լոյտ.

Տիգրանակերտ, 25 Նոյ. 90

Տէր,

... Կ'երևի թէ հայ երէց մի հանդերձ իւր եղբարբ և եղբօր կնաւն, Խարղանէն ճամբայ ելան ի Քորլիթ երթալու, որ Ֆարքինէն 20 վայրկեան է և բնիկ վայրն յիշեալ երիցուն։ Գիւղէն հինգ կամ վեց վայրկեան հեռուն՝ երէցն տեսաւ 4 կամ 5 վայրենադէմ քրդեր սպառազէն՝ ճամբէն մի քանի քայլ ի բացեայ դարանակալ։ Կասկածելով թէ գուցէ աւազակ էին նոքա, երէցն ճեպեց դէպ ի գիւղն որ բլրոյ մի զառիթափին վերայ էր, օգնութեան կանչելու համար, բայց հագիւ առաջիններուն աչքէն հեռացած էր երբ զինեալ քրդաց ուրիշ ջոկ մի երևան ելաւ և միացաւ առաջնոյն, այսպէս կազմելով 12 հոգիէ բաղկացեալ աւազակախումբ մի։ Նոքա նախ և յառաջ յարձակեցան մարդուն

վերայ և յետ ծաղրելոյ զնա գնդակահար սպանեցին զնա անդէն · ապա դարձան դէպ ի հէք կինն, որ կ'ըսեն թէ տասն և վեց տարեկան է և յոյժ աղուոր, վայրագօրէն վարուեցան նորա հետ, կապեալ կողոպտեցին և անպատուեցին զնա ։ Մինչ այս մինչ այն, գիւղէն մարդիկ հասան ողբերգական այս տեսարանին վերայ, յորժամ Քրդերն փախան թողլով իրենց զոհն կիսամեռ ։

Գիւղէն եկողներուն մէջ էր սպաննուած երիցուն եղբայրներէն մին, որ ի տես իւր սպաննեալ եղբօրն և ըլկեալ երբօրկնոջն՝ կորոյս զկշիռ մտացն առ անհնարին վշտին, և անձնասպան լինելով ինկաւ իւր մեռեալ եղբօր դիակին վերայ ։ Այլքն առին զկինն և գնացին ի Ֆարքին դնել զ(°)առաջի դայմագամին, սակայն ոչ սոսկալի ոճրոյն պատմութիւնն և ոչ անպատուեալ կնոջ ողորմելի վիճակն կրցան շարժել զնա բռնել ձեռնարկելու գազանամիտ ոճրագործներն կամ ոստիկաններ յղելու ուր զոհերունմարմիններն դեռ կը մնային դիտապաստ ։...

ՄԵՐ ՌՈՒՍԱՀԱՅ ԵՂԲԱՐՑ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՌԱՆԴԸ

Պաթում Փետր · 10, 1891

Տէր իմ,

Պատիւ ունիմ ծանուցանել Ձեզ թէ Թուրքիոյ մէջ տեղի ունեցած հայկական դժուարութեանց հետ կապակցեալ վերջին դիպաց արդեամբ՝ այս երկրի Հայոց մէջ ազգային ըղձից ցոյցերն քիչ մի աւելցած են ։

Ներկայ տարւոյ Յունվարի մէջ՝ Թիֆլիզի քաղաքապետի ընտրութեան պահուն՝ ամեն ջանք ի գործ դրին քուէից մեծամասնութիւնն շահելու ի նպաստ Տիար Մաթինովի, ծննդեամբ և զգացմամբ Հայու մի ։ Հայ Բարեսիրական Ընկերութիւններն քան զսովորականն մեծածագոյն թուով և աւելի առատաձեռն նպաստողներ կը գտնեն հարուստ և աղքատ դասերէն ։ Կաւկասի բնիկ մամլոյն քան զամենայն մեծագոյն բաժինն Հայոց կը վերաբերի, որք այս տարի օրացոյցներու բացառօրէն մեծ թիւ մի հրատարակեցին, որոցմէ ոմանք զարդարուած էին նշանաւոր կամ ժողովրդական հեղինակաց լուսանկարներովն, Էջմիածնի և այլ պատմական վանքերու պատկերներովն ։ Բաց աստի՝ հայ գրականութեան և պատմութեան ուսումն այնքան սիրուած չէր կրթեալ Հայոց մէջ որքան այժմ, եւ գրեթէ կանոն եղած է, ինչ որ տարի մ'առաջ իսկ չէր, որ բոլոր Հայեր, եւ եւս նոքա որք զՌուսերէնն այնքան քաջ գիտեն որքան զհայերէնն՝ եթէ ոչ լաւ եւս, գործածեն խօսակցութեան մէջ՝ ի տան եւ ընկերութեան՝ միայն հայերէն լեզուն ։

Այս եւ այսպիսի ցոյցեր․ որք ցոլացումն են ըղձիցն այն հայ հայրենասիրաց որք կը հաւատան թէ պարտի գալ ժամանակն յորում ինքնօրինութիւն պիտի տրուի իրենց ազգին, յիրաւի շատ յաճախած եւ ընդհանուր դարձած են Թուրքիոյ հայկական յուզմունքէն ի վեր ։

Տ․ Թ․ ՓԻՔՕՔ

Առ Լորտ Սալզպըրի ։ (Տես Պլիու Պուք, 1892, երես 19)

ՆԱՄԱԿ Կ․ ՊՈԼՍԷՆ

Փառաւոր և օգտակար գործ մ'էր Հայրիկի ընտրութիւնը ։ Հայկական շարժման կարեւորագոյն երևոյթներէն մին կը համարուի այս ընտրութիւնը ։ Ազգին ներկայացուցիչները աներկիւղութեամբ և միաբանութեամբ ցուցին թէ ազգը կը սիրէ զՀայրիկ, կը վստահի Հայրիկի և ակնկալութիւններ ունի Հայրիկէ ։

«Հայք»ի ընտրելին յաջողեցաւ, սակայն նոյն անձը Սուլթանի ընտրելին չէր ։ Սուլթանն անշուշտ զայրացաւ ի տես ընտրութեան սոյն ելից, զոր իրաւունք ունի ցոյց մը համարել իրեն դէմ ։ Կ'ըսուի թէ կառավարութեան կողմէ Պատրիարքին սա յանդիմանութիւնն եղած է թէ ինք Թուրքիոյ պատգամաւորաց ի Ռուսիա ուղեւորութեան համար անձագիր խնդրած էր որպէս զի Խրիմեան ընտրուի ։ Շատ հաւանական է որ կառավարութիւնը իւր սոյն տհաճութիւնն արտայայտելու համար էր որ այս տարի արգիլեց Սահմանադրութեան տարեդարձի հանդիսին կատարումը, թէպէտ նաև կ'ըսուի թէ կառավարութիւնն իմացած էր որ հայրենասիրական ցոյց մի պիտի կատարուի հանդիսին օրը, և ուստի փութացած էր հանդէսն արգիլել ։ Վերջապէս հանդէս գըրեթէ տեղի չունեցաւ ։ Իրենց հետ ընտանիք ունեցող սակաւաթիւ անձինք հիւանդանոցին պարտէզը մտնել թոյլատրուեր են, ճաշ մը տեղի ունեցեր է, և մանաւանդ ուրախ ենք որ Պատրիարքը կարեւորագոյն բանը չմոռնալով բաժակ պարպեր է վասն կենաց և բարօրութեան Վեհ․ Սուլթանին ։ Եէտի Գուլէ տանող երկաթուղւոյն կայարանաց մէջ ոստիկանք կեցած էին և երբ իմանային թէ մէկը Հայ էր, թոյլ չէին տար որ նա Եէտի Գուլէի համար տոմսակ առնու ։ Ուրիշ ճամբաներու վերայ ևս բազմաթիւ ոստիկանք կը ջանան թոյլ չտալ որ իւր հետ ընտանիք չունեցող Հայ մը հիւանդանոցի պարտէզն երթայ ։ Անշուշտ ընդդիմութիւնք և քանի մը ձերբակալութիւնք տեղի կ'ունենան, սակայն այն օրը վերջապէս խաղաղութեամբ երեկոյ կ'ըլլայ ։

Կառավարութիւնը հայ երեւելիներն ալ, միւսներուն պէս, իրեն դէմ հանելու այս մէկ պատեհութիւնը ձեռքէ չփախցուց ։ Պատրիարքը հրաժարական տուաւ և երկու շաբթիէն սկսեալ ամբողջ շաբաթ մը Պատրիարքարան չգնաց ։ Սակայն շաբաթ օր պալատ կը հրաւիրուի և կը յանդիմանուի ու կը նախատուի ։ Ի՛նչ մարդ է այս որ չգիտեր իւր ազգին, կարգին, պաշտօնին և անձին պատիւը պահել ։ Յաջորդ երկուշաբթի օր վերստին իւր պաշտօնին գլուխն անցաւ, և այսպէս կամաց կամաց պիտի մեռցունէ վերստին կենդանացած խնդիր մը ։

Պայթուցիկ ռումբերու լուրեր լսեցինք, սակայն այդ ռումբերուն պայթիւնը դեռ չլսեցինք ։ Սուլթանն ստոյգ աղբիւրէ կ'իմանայ նաև թէ 36 ռումբեր բերուած են մայրաքաղաքս ։ Ասոր վրայ ամենախիստ քննութիւնք և զգուշութիւնք կը կատարուին, սակայն ռումբերը ո՛չ գտնուեցան և ո՛չ գործ մը տեսան ։ Այս առեններն է որ Սուլթանը իւր պալատականներէն միոյն խօսելու առեն կ'ըսէ թէ Հայերն ինչո՞ւ համար դեռ իրենց սէվտայէն վազ չեն անցնիր քանի որ ինք պատրիարքարանի վերաշինութեան արտօնութիւն տուած էր և Հայոց ուրիշ խնդիրները կատարած էր ։ Թագաւորն այս խօսքն իրօք ըսած է, սակայն չեմ գիտեր թէ ինչ զգացմամբ ։

Այս միջոցին ամեն ոք կը սպասէ Ռուսիոյ Ցարին որոշման ի մասին կաթողիկոսութեան ընտրութեան ։ Մաղթենք որ ամբողջ ազգին սիրածը և ընտրեալը լինի ազգին գլուխ ։

Կ․ Պոլիս ԱՆԱՆՈՒՆ

18 Յունիս 1892

ՆՄՈՅՇ Ի ԳՐՈՒԱԾՈՑ ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿԻ․ ԱՒԵՏԱՐԱՆ

Ո՞րն է այն մատեան, որ առաւել մարդոց սրտին հետ կը խօսի քան թէ մտաց․ ո՞վ է այն մատենի արագագիր դպիր, որուն լեզուէն ու շրթունքներէն շնորհք և սէր կը բղխի, իր խօսքեր բոլոր աշխարհ կը գրաւէ, և մարդոյ հոգին վարելով ի գերագոյն սէր՝երկրէս երկինք կը հանէ․ ի՞նչ է այն մեղմախօս բարբառ, որ Հրէաստանի խորէն տիեզերաց չորս կողմ հասաւ․ ի՞նչ զօրաւոր լեզու էր այն, որ ընտրեալ յիմարներուն բերնով՝ աշխարհիս իմաստնոց միտքեր յաղթահարեց ու նուաճեց ։ Աւետարանն է այս յաւիտենական կենաց բան, զոր

Յիսուս քարոզեց, կտակ թողուց աշխարհի ու գնաց· Սուրբ հոգին յիշեցուց· աւետարանիչներն գրեցին։

Աւետարան Յիսուսի չունչն է, որով չեթէ միայն Բաբիլոնի դաշտին մէջ ցրուած հրէական ազգին շրջած ոսկորներ կենդանացոյց այլ համատարած աշխարհիս երես սփռուած կենդանւոյն մեռած ընդհանուր մարդկութեան հոգիներն ի նոր կեանս վերանորոգեց։

... Չկայ բնաւ գիրք մի կամ մարդկային հանճար և իմաստութիւն, որ կարողանայ մարդոց ստահակ հոգին ուղղել, դաստիարակել և բարւոքել միշտ ի չարն արձանացած՝ ի բարին վերածել, բայց միայն Աւետարանը։ Այս փոքրիկ հրաշագիր մատեան աշխարհ կարդաց ու հասկցաւ· այս մանրիկ մանանեխի սերմէն ծառ մի բուսաւ, որուն ապաստանարար ճիւղերուն վրայ աշխարհիս վաստակեալ մարդիկ թռչունի պէս նստան ու հանգիստ առին։

Յիսուս իւր Աւետարանին պատուական մարգարիտ Հրէաստանի հրապարակին մէջ ի վաճառ հանեց, աղքատքն և հարուստն վազեցին ի գնել· մարգարտին տէր ձրի կը բաշխէր, ոչինչ չէր պահանջեր, այլ միայն հաւատք, ո՛վ որ կը հաւատար, նա միայն կ՚ստանար մարգարիտն։

Աւետարանին մարգարիտ յիմարներուն սրտին մէջ հաւատք է, իմաստնոց մտքին մէջ անհերքելի ճշմարտութիւն, մէկն առանց քննելոյ կը հաւատայ, միւսն Տեքարթի պէս քննել ուզելով՝ կ՚ափշի և կը սքանչանայ։

Աւետարանին կերակուր անմահարար է, կաթէն աւելի սնուցիչ, մեղրէն աւելի քաղցր է· Դաւիթ ճաշակեց զայն հոգւով և անուշութենէն զմայլելով կասէր·

«Որպէս զի քաղցր են իքիմս իմ բանք քո, քան զմեղր բերանոյ իմոյ»։ ... Յիսուս միայն չինեց կրօնի սուրբ մեղր, որով քաղցրացաւ հանուր մարդկութեան բերան, որ դառնացած էր Ադամայ ճաշակած պտղով։ Աւետարան Աստուածորդւոյն երեսաց արտափայլող լոյսն է· եկեղեցին մութ է, եթէ սորա լուսով չի լուսաւորի, եկեղեցին կը խոտորի, եթէ սորա լոյս չառաջնորդէ, եկեղեցին հաստատ չէ, եթէ ուրա սուրբ քարերով չը հիմնուի։

Հայ եկեղեցւոյ մեր երանելի նախնիք ո՞րչափ երկիւղածութեամբ պաշտեր են աւետարան, յորոց ոմանք մեկնութեանց պարապելով՝ Աւետարանին գիտութիւն ժողովրդոց ընտելացուցեր են։ Եթէ ապացոյց կ՚ուզես՝ գնա շրջիր Ասիոյ վանօրէից, քաղաքաց և գիւղերու մէջ, ուր կը տեսնես բիւրաւոր գրչագիր աւետարաններ և նոցա մեկնութիւնք մագաղաթներու վրայ վայելուչ ծաղկենկարներով գրուած։ Եւ այսօր իսկ եկեղեցւոյն մէջ ամեն ընթերցուածներէն առաւել աւետարան կը պաշտուի· վասն զի ժողովրդոց խնկելի գիրք Աւետարանն է, զոր կը համբուրէ յաճախ ամենայն ջերմեռանդութեամբ, թէ հիւանդանայ, Աւետարանին կը դիմէ, թէ գլուխ ցաւի, անոր տակ կը դնէ, թէ հաւատայ, կատարելապէս իւր ցաւեր կը փարատին։ Աւետարանին հրաշալիք մեծ է, միայն մարմնոյ ախտեր չը բժշկեր, այլ առաւել ևս հոգւոյն ախտեր կ՚ապաքինէ։

Առէք ընդունեցէք ուրեմն, ո՛վ եկեղեցւոյ մօր հոգեծին մանկունք, Յիսուսէն աւանդեալ արքայութեան սոյն մարգարիտ, զոր իբրև փոկրիկ մանեակ մի ընելով ձեզ կը նուիրեմ։

Սողոմոնի ձայն կը յորդորէ զձեզ, որ այս մանեակ ձեր պարանոցէն կախէք· որպէս իմաստուն վաճառական ամէն բան վաճառելով, միայն Յիսուսի Մարգարիտն ստացէք, որուն հետ բնաւ հաւասարութիւն չունին բոլոր աշխարհիս թագաւորութեան գանձեր։ Ի՞նչ գին կը խնդրէ հապա այս մարգարտին տէր, ուրիշ ոչինչ, սիրտ միայն։ Տուր ուրեմն քո սիրտ, որդեակ, ինչպէս կը խրատէ իմաստունն և ահա կը ստանաս մարգարիտն։

ԽՐԻՄԵԱՆ

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

ԲԱՂԱՔԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՀԱՆՐԱՀԱՆ ԼՈՒՐԵՐ

—Յանձնախումբ մի կազմուած է Թուրքեւպուլկարական սահմանագծի մէկ մասն վերջապէս որոշելու· պուլկարական սահմանին մէջ ինկող վայրեր կան սահմանագծին մօտ՝ որոյ բնակիչք թէև ցեղով պուլկար են, այլ մահմետական կրօնն դաւանած լինելով չեն ուզեր պուլկար իշխանութեան հպատակիլ։

— Երբ Յունիս 25ին Տի· Կլատսթըն ժողովի կ՚երթայր, չարաճճի ոմն բան մի նետեց նորա երեսին՝ աչքին մօտիկ։ Իռլանդական ինքնօրինութեան թշնամիներէն ոմանք կը համարուի գործած լինիլ այս պժգալի գործ։ Ամեն երկրի մէջ ալ փաստի դէմ փայտ գործածող խօլամիաներ կը գտնուին։

—Ռումանիոյ Ազգային ժողովոյն 18 Մայիսի նստին մէջ, որպէս կը տեղեկանամք Լ՚Առմէնիէն, Տի· Փորումպարոյ հարցապնդումմ՚ըրած է Ռուսչուքի ռումբերու գործին նկատմամբ։ Տի· Մարղիլման արդարութեան նախարար, պատասխանած է թէ — քանի մի չարաթ առաջ հայազգի Կարապետի տան մէջ ի Ռուսչուք գտնուած են 14 ռումբեր, որք Սոֆիայէն ուղղեալ հեռագրի մի համեմատ, ի Ռումանիա չինուած և Բագարատ անուն մէկուն ձեռքով ի Պուլկարիա փոխադրուած լինիլ կը սեպուէին։ Ռուման իշխանութեան քննութիւններէն երևաց թէ դաւակցութիւնն լոկ Թուրքիոյ դէմ ուղղեալ է· Թուրք հողոյն վերայ տարածուած Հայերն կազմակերպուած են և կը միտին փրկել իրենց հայրենիքն օսմանեան լծէն։ Հայ ազգային շարժումն երկու հոսանաց բաժնուած է· մին պարզապէս յեղափոխական է· և անոր վարիչք գործնականին անցած են օտար անիշխանականաց կերպերն ի կիր արկանելով։ Ճիշդ չէ այն զրոյցն թէ ռումբերն ի Ռումանիա չինուած են, քննութիւնք ցուցին թէ անոնք ի Պուլկարիա չինուած են, Թիւթիւնճիէֆի տան մէջ։ Ռումանիոյ մէջ ձերբակալեալ 4 Հայերն ըստ երևութին տարբեր արուեստներով զբաղեալ էին, և չէին կրնար վերջապէս շատ գերսկշիռ դեր կատարել քանզի իրենց պետերն գ՚ապրին ի Զուիցերիա և ի Միացեալ Նահանգս։ Այդ չորս Հայեր արտաքսուեցան, ըստ որում մեր օրէնսդրութիւն չթոյլատրեր դատել զնոսա։—

— Արաբկերի հայոց մէջ տեղի ունեցած յուզմանց մասին «Հնչակ»ի ուղղեալ թղթակցութենէ կը տեղեկանամք թէ տեղւոյն կառավարութիւնն շուկայն հանելով քաղաքապետն և զինուորական գայմագամն՝ պատրաստուած թուղթ մի ստորագրել տալ կ՚ուզէ հայ երեւելեաց։ Սոքա կը մերժեն ստորագրել առարկելով թէ անտեղեակ են պարունակութեանն։ Մինչ պաշտօնեայք կը վերադառնան և ուրիշ միջոց գործածել կը խորհին, ազդեցիկ Հայերն ալ իրենցմէ մէկուն տունն հաւաքուելով կը խորհրդակցին թէ ինչ ընթացք բռնեն այս ապօրէն պահանջման առջև։ Զինուորական գայմագամն լուր առնելով կը հասնի երեւելեաց ժողովուած տունն և կը ըսպառնայ իբրև յեղափոխականներ ձերբակալել ամենն ալ եթէ իսկոյն չստորագրեն թուղթն։ Ժողովականք ճարահատեալ կը ստորագրեն թուղթն որոյ իմաստն սա է թէ քաղաքիս մէջ բանտարկեալներ չկան բաց ի երեք հոգիէ (իւսուֆի ենթագրեալ սպանիչքն) և թէ անդրդիական թերթերու մէջ հրատարակեալ լուրերն Արաբկերցւոց տառապանաց մասին՝ սուտ և թշնամական են։ Ստորագրողք բողոքագիր մ՚ալ կը պատրաստեն սակայն և վերոյիշեալ պարագաներն յիշելով կը յղեն Սուլթանի պալատն, ի պատրիարքարան և մեծ տէրութեանց դես-

պաններուն։ Անկէ յետոյ է որ զինուորական բարձրաստիճան պաշտօնեայ մի կը յղուի յԱրաբկիր, որ ի Քաւթէմունի կ'աքսորէ զՇկուեան Մարտիրոս (խտարէի ազա), զՃանճիկեան Գրիգոր (քաղաքին առաջին էսնաֆըն), զԺամագործեան Յակոբ, զՔէնտիկեան Մաթէոս, և զՇրամեան Յակոբ (քաղաքին առաջին սեղանաւորն), և ի Կ. Պոլիս կը յղէ շնթայակապ երեք դպրոցական պատանիներ (14—15 տարեկան) հարցաքննուելու։

Շնորհակալութեամբ ստացանք «Հայկական Խնդիրըն» անունով Փռանսերէն տետր մի, 25 երեսներէ բաղկացեալ, «Ռէվիւ Ժէնէռալ» հանդիսին 1892 մարտ թիւէն արտատպեալ։ Հեղինակն է Տիար Ժիւլ Լըքլէռք, նախագահ Պելճիական Արքունի Աշխարհագրական Ընկերութեան, ի Պրուքսէլ։ Մեծարգոյ յօդուածագիրն ջերմ համակրանօք խօսած է մեր ազգի վերայ և քաջ պաշտպանած է մեր իրաւունքն։ Հետեւեալ տողերն մեր ընթերցողաց ուշադրութեան կը յանձնեմք.—«... Հայրենասիրութիւնն ու կրօնական հաւատքն չեն կրնար լընուլ զտեղին այն բարեմասնութեան որք հարկաւոր են ինքնօրինութեան ձգտելու համար։ Վերջ ի վերջոյ, ազգային զգացման զարթումն պիտի կարենայ վերածնել այս ժողովրդեան մէջ այն արութիւնն և նախաձեռնութեան ոգին զոր կը կրէր իւր անկախութեան ատեն, բայց ազատութիւնն ձեռք բերելու կարող լինելէ առաջ, պարտի նա գիտնալ ի հանդէս ածել այն նոյն առաքինութիւններն զորս Յոյնք, Սերպք և Պուլկարք ցուցին իրենց անկախութեան հետապնդելու ատեն։»

—Հայկ. Միութեան Յունիս 18ի նստին մէջ ատենախօսեց Տի. Յ. Հիւրմիզ, նիւթ ունենալով «Ամերիկայի Սահմանադրութիւնն և ամերիկեան քաղաքացի լինելու պայմաններն։» Ատենախօսութենէն յետոյ Տրք. Այվազեան և Գաբրիէլեան եւս ինչ ինչ խորհրդածութիւններ ըրին նոյն նիւթին վերայ։

Յուլիս 2ի նստին մէջ պիտի ատենախօսէ Տր. Մ. Տատրեան, նիւթն է «բարեկամութիւն։»

Մեծ. Գ Գասպարեան, մեր Պրուքլինցի հայրենակիցն ու հեղինակ«Մարգարան» գրքին, Յունիս 22ին ունեցաւ իւր անդրանիկ զաւակն, Նեւտոն Գրիգոր Գասպարեան։

«ՀԱՅՔ»

Հայրենասէր ոմն Փարիզէն 10 թալէռ նուիրած է ի նպաստ «Հայք»ի հրատարակութեան։

Հայրենասէր ոմն մէկ օրինակ «Հայք» նուիրեց պարսկաստանի Նակարա քաղաքին Հայոց ընթերցարանին։

Հայրենասէր գործաւոր հայ մի(Վէրմոնթի կողմէն) նուիրած է երկու թալէռ։ Լիննէն հայրենասէր ոմն նուիրած ի մէկ թալէռ, և այլ հայրենասէր ոմն երկու թալէռ։

Մեր խորին շնորհակալութիւնն կը յայտնեմք հըրապարակաւ բոլոր այս համակրողաց մեր գործին։

— Խարբերդի մէզրաայէն կը գրէ թղթակից մի 18 Մայիս թուով.— Թուէս երկու օր յառաջ Մելքոնեան Գէորգ Աղայի խանութն աւազակներ բանալով տարին բոլոր ծանրագին ապրանք. այս խանութը կը գտնուի Թուրք պագալ Միրօ անուն աւազակի տան ներքև և ծակուած է ճիշդ այդ անձի տան մէջէն, ասկից դիւրին է հասկնալ թէ՝ կամ Միրօ ինքն գողցած է և կամ գողերու ընկերացած։ Գէորգ Աղան բողոքեց Միրօի դէմ տակայն կառավարութիւնը փոխանակ զՄիրօն բանտարկելու Գէորգ Աղան բանտարկեց և Միրօն անպարտ արձակեց. ոմանք ալ կ'ըսեն թէ ընդհ. դատախազի երաշխաւորութեամբ արձակուած է։ Գէորգ Աղայի բանտարկելուն պատճառը՝ կ'ըսեն թէ «դու Միրօյի տունը բացած ես։»

ՀԱՄԲԵՐՈՂ

—Մարմարի հայ ընկերութիւն մի կայ որ կը բաղկանայ Խարբերդցի երեք Պէննէեան եղբայրներէ, Դաւիթ Գասպար և Մովսէս, որոց առաջինն նախ Ամերիկա եկած է 8 տարւոյ չափ առաջ և Vermont ի Մարմարի գործարաններուն միոյն մէջ մարմարագործութիւն սովրիլ սկսած է. Տի. Դաւիթ 2 տարիի չափ Ամերիկայ մնալէն ետքը Պրն. Գասպար եկած է այն եւս իւր եղբօր նըման և հետ նոյն արհեստն սովրելու սկսած է։ Ուրախ եմ ըսելու թէ երկուքն ալ յոյժ յաջողութեամբ սովրած են արհեստն և նշանաւոր հանդիսացած են Vermont ի մարմար գործողներուն մէջ։ Մեծ Եղբայրն Պրն. Դաւիթ Vermontի մարմարի ընկերութեանց ամենամեծերէն միոյն գործաւորապետն եղաւ վերջապէս։

Մէկ ու կէս տարւոյ չափ առաջ թողլով զVermont և անդ ունեցած գործերնին գացին Քալիֆօրնիոյ Սան-Պէրնարտինօ քաղաքն ուր այժմ ունին մարմարի և այլ քարերու խանութ մը որն կը շարունակեն լաւ յաջողութեամբ և շատ յառաջանալու յուսով։ Պրն. Մովսէս 6 ամսոյ չափ առաջ հասաւ յԱմերիկա իւր մօր և քրոջ հետ, որուն եղբայրքն զինքն եւս միացուցին իրենց թուոյն և գործին և կոչուեցան «San-Bernardino marble & Granite C »

Վերոյիշեալ նահանգին (Vermontի) մէջ կայ նոյն արհեստով պարապող ուրիշ Հայ մը, նոյն գերդաստանէն և քաղաքէն,— Տի. Պաղտասար Պէննէեան, որն եւս նշանաւոր եղած է իւր գործաւորակցաց մէջ։

ՄԵԼՔՈՆ ՊԷՆՆԷԵԱՆ

— Տր. Հինտլեան, որ բժշկական ուսմանց ընթացքն Պալթիմորի մէջ աւարտելէ յետոյ ժամանակ մ'ալ Լինի հիւանդանոցին մէջ իբրև օգնական բժիշկ գործած էր, այժմ հաստատուած է ի Պօսթըն, ուր ունի իւր պաշտօնատեղին։

ՆՈՐ ՀԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Շնորհակալութեամբ ընդունեցանք ՀԱՅՐ Ց. Վա. ԹՈՐՈՍԻ «Ընտիր Հայկազունք»ն, Բ. տպագրութիւն, յորում հեղինակն բանաստեղծական ոճով այլ արձակ և պարզ լեզուաւ կուտայ հետեւեալ ընտիր Հայերու կենսագրութիւնն և պատկերներն.— Հայկ, Տիգրան Բ., Արտաշէս Բ., Սաթենիկ, Սրբուհի Սանդուխտ, Ս. Գրիգոր Լուսաւորիչ, Մեծն Տրդատ, Սրբուհի Աշխէն, Սրբուհի Խոսրովիդուխտ, Մեծն Ներսէս, Մուշեղ, Ս. Սահակ, Ս. Մեսրոպ, Ղեւոնդ Երէց, Վարդան, Շուշան Վարդենի, Մովսէս Խորենացի, Վահան, Ներսէհ Կամսարական, Գայլ Վահան, Անանիա Շիրակացի, Աշոտ Ա., Ս. Գրիգոր Նարեկացի, Ս. Ներսէս Շնորհալի, Ս. Ներսէս Լամբրոնացի, Լեւոն Ա.։ Գինն է հինգ Փրանք, տպեալ ի վանս Ս. Ղազարու, Վենետիկ։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՄԱՐԳԱՐԱՆ

(Չափաւոր օրինակներ միայն տպեալ)

Սոյն Մարգարան 128 երեսներէ բաղկացեալ և 36 ձևերով բացատրեալ, ինքնուսոյցն գրքոյկ մ'է զինուորականմարզանաց և մարտագիտական սկզբանց։

Գինն որեւէ հասցէի համար 50 սէնթ կամ երկու և կէս Փր։ Վեց կամ աւելի օրինակներ գնողին, հարիւրին 25 զեղչ կը լինի։ Կրնայ ստացուիլ «ՀԱՅՔ»ի Խմբագրութենէն կամ ուղղակի հեղինակէն, հետեւեալ հասցէով, G. Casbarian, Gen. P. O. Brooklyn, New York U. S. A.

ՓՈԽԱՆԱԿԱԳԻՐ

Թուրքիա դրամ ղրկելու համար ոչ մի տուն Ամերիկայի մէջ կրնայ տալ այնչափ դիւրութիւն և ներշնչել այնչափ վստահութիւն որչափ կուտայ Կիւլպէնկեան մեծ տունն որ ճիւղեր ունի Թուրքիոյ բոլոր կողմերն և Եւրոպիոյ նշանաւոր քաղաքաց մէջ։ Ամերիկաբնակ Հայք որ դրամ ղրկել կ'ուզեն ի Թուրքիա կրնան ամենայն վստահութեամբ դիմել առ Տի· Կիւլլապի Ս· Կիւլպէնկեան,

53 Cedar St. N.Y.

ՅՈՎՀԱՆՆԷՍ Մ· ՀԱՅԿՈՒՆԻ

Պատիւ ունի ծանուցանել թէ իւր 1554 B. Way, 46 *և* 47*դ փողոցներուն միջև*
Constantinople Bazaar*ի (Քոնսթանթինոփլ Պազար) մէջ ունի թրքական մեծաքանակ ձեռագործներ* (embroidery) *գորգեր (խալի), ուրիշ զանազան Թուրքիոյ ապրանք, և կը ծախէ դիւրագին գներով այն Հայերու որք կ'ուզեն ամարանոցներն և այլ տեղեր երթալ վաճառակութեամբ, և անոնց ևս որք կ'ուզեն ընծաներ տալ իրենց բարեկամներուն և գործարանապետներուն։ Թէ ապրանաց հարազատութեան և թէ գներու չափաւորութեան մասին կրնամք կատարելապէս վստահեցունել մեր Հայրենակիցները, ինչպէս արդէն շատեր փորձով գիտեն։*

THE WORCESTER MECHANICS SAVINGS BANK
311 Main St. Worcester, Mass.

ՎՈՒՍԹԸՐ ՄԷՔԷՆԻՔՍ ՍԷՅՎԻՆԳՍ ՊԷՆՔ

Վուսթըրի Հայերն իրենց խնայողութիւններն կըրնան ապահովապէս դնել վերոյիշեալ պանքային մէջ, որ շահ ալ կը վճարէ Յունվար, Ապրիլ, Յուլիս և Հոկտեմբոց կէսէն հաշուելով։

REGULATE THE
STOMACH, LIVER AND BOWELS,
AND
PURIFY THE BLOOD.
A RELIABLE REMEDY FOR
Indigestion, Biliousness, Headache, Constipation, Dyspepsia, Chronic Liver Troubles, Dizziness, Bad Complexion, Dysentery, Offensive Breath, and all disorders of the Stomach, Liver and Bowels.
Ripans Tabules contain nothing injurious to the most delicate constitution. Pleasant to take, safe, effectual. Give immediate relief.
Sold by druggists. A trial bottle sent by mail on receipt of 15 cents. Address
THE RIPANS CHEMICAL CO.
10 SPRUCE STREET, NEW YORK CITY.

Ripans Tabules are of great value.
Ripans Tabules cure headache.
Ripans Tabules cure constipation.
Ripans Tabules : for liver troubles.
Ripans Tabules : a family remedy.
Ripans Tabules : for sour stomach.

Հայե՛ր

Երբ նոր գլխարկի, օձիքի կամ ոևէ արական հանդերձեղենի պէտք ունենաք, գնացէք New York Hat House, 14 Front Street, Worcester, *որ Մէյն փողոցին մօտիկ է, հոն պիտի գտնէք լաւ ապրանքներ միայն, և շատ ժամ։*

HAGOPIAN
PHOTO-ENGRAVING CO
3 Great Jones St. New York
Engraving for all purposes of illustration in line & half-tone.

N. DESCHAMPS
Ն· ՏԷՇԱՆ

Վուսթըրի Main (*Մէյն*) *փողոցին* 259*դ թիւ խանութը դիմացկուն և ժամն կոշիկներ և մոյկեր կը վաճառուին։ Պարոն Տէշան շատ քաղաքավար և պարկեշտ գործ ընող մէկն է և ամեն այցելու իրմէն գոհ կը մնայ։ Փորձէ և պիտի համոզուիս։*

P. SHALJIAN
9 SPRUCE ST. NEW YORK
ԳՐԲԵՐ ԵՒ ՏԵՏՐԱԿՆԵՐ ԿԸ ԿԱԶՄԵՆԲ ԳԻՆ ԶԱՓԱՒՈՐ
ԿԱԶՄ ԸՆՏԻՐ

MARK F. COSGROVE
ԿՈՇԻԿՆԵՐ, ՄՈՅԿԵՐ ԵՒ ԸԼՊՊԸՐՆԵՐ
78 Front St·, Corn Bigelow Court
WORCESTER MASS·

Այս է ամենէն աղէկ խանութն Վուստըրի մէջ, ուր կրնաս գտնել ամեն տեսակ կոշիկներ մոյկեր, և կոշիկի ըլպպըրներ։ Հրամէ եկուր ռնդամ մը և տես թէ ինտոր լաւ ընդունելութիւն կուտանք մեզ այցելող Հայերուն։

LANTELME'S
HOTEL & RESTAURANT,
40 UNION SQUARE NEW YORK CITY
16 *և* 17 *դ փողոցներու միջև արևելեան կողմն։*
—Ընտիր Գաղղիական Խոհարարութիւն—
Նախաճաշ 40 *և ճաշ* 75 *սէնթ*

BUSH & CO
ՊՈՒՇ ԵՒ ԸՆԿ·
ԳԵՂԱՊԱՊՈՒԹ
(*Հաստատեալ ի* 1849)
56 FRONT STREET WORCESTER, MASS.
Դեղագիրք խնամով կը պատրաստուին և չափաւոր գնով

PHARMACIE FRANCAISE,
NORBERT FRANCK.
311 7th AVENUE, NEW YORK.
Դեղագիրք կը պատրաստուին խնամով

— «*ՀԱՅԲ*»*ի* 1891 *տարին ամբողջ կապուած կը ծախուի* 2 *թալէր* 5 *սէնթի։*

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Մ· Ս· ԳԱԲՐԻԷԼԵԱՆ